«Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից ՀՀ Սյունիքի մարզի Խալաջի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

19.08.2021թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Աճանանի գյուղապետարանի վարչական շենքում 2021 թվականի օգոստոսի 17-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից ՀՀ Սյունիքի մարզի Խալաջի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն՝ Ա" Կարապետյանը, «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ գլխավոր ճարատարագետ՝ Ս" Առստամյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2021 թվականի օգոստոսի 5-ի թիվ 146 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am): Նաև տեղեկացրեց, որ հայցվող տարածքի հեռավորությունը Աճանան բնակավայրից 145 մ է, մինչև Հ46 ճանապարհը՝ 70 մ, մինչև Արծվանիկի պոչամբարը՝ 915 մ, մինչև Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արտադրական հրապարակը՝ 270 մ: Նախագծով բաց հանքը ունի հետևյալ պարամետրերը" ամենամեծ երկարությունը՝ մոտ 200 մ, ամենամեծ լայնությունը՝ մոտ 85 մ, ամենամեծ խորությունը՝ մոտ 50 մ:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ գլխավոր ճարատարագետ՝ Սերգեյ Առստամյանին:

Զեկույց (Սերգեյ Առստամյան)- Հարգելի հանրային լսման մասնակիցներ, ինչպես ներկայացրեց հանրային քննարկման վարողը, Աճանան հանքավայրի պաշարները կազմում են 378,2 հազ. մ^3 բազալտե հումք: Հանքի տարեկան արտադրողականությունը թույլատրվում է 18,9 հազ. մ^3 , իսկ հանքի ծառայման ժամկետը՝ 20 տարի: Հանքի աշխատանքային ռեժիմը ընդունված է տարեկան 260 աշխատանքային օր, 1 հերթափոխով, հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ: Մակաբացման շերտը հասնում է մինչև 3 մ: Մակաբացման գրունտից բաժանվելու է բուսական շերտը, որը կպահեստավորվի տարածքին կից հետագա

ռեկուլտիվացիայի համար: Արտադրական հրապարակում եզրագծով տնկվելու են արագ աճող ծառատեսակներ, թփեր: Շահագործման ավարտից հետո կկատարվի խախտված տարածքների ռեկուլտիվացիա: Հանքի շահագործման ժամանակահատվածում կպահպանվեն բնապահպանական օրենսդրության պահանջները ամրագրող բոլոր օրենքները՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք, ՀՀ հողային օրենսգիրք, ՀՀ ջրային օրենսգիրք, ՀՀ անտառային օրենսգիրք, Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք, Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք, Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք, Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք, Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության ՀՀ օրենք և ՀՀ կառավարության համապատասխան որոշումները: Քանի, որ մեր ընկերությունը ճանապարհաշինարարական է, ապա հնարավորություններ ունի Ձեր համայնքին օգտակար լինել փողոցների, բակերի նորոգման աշխատանքներում: Այսինքն հումքը, որ օգտագործելու ենք՝ արտադրելով խիճ, ավազ, պատրաստ կլինենք օգտակար լինել Ձեր ճանապարհները բարեկարգելու համար:

Հարց (Ավետիսյան Վասիլի-Աճանանի բնակիչ)- Հանքը ու՞մ սեփականությունն է:

Պատասխան (Սերգեյ Առստամյան)- Ինչպես պարոն Թադևոսյանը ներկայացրեց, «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերությունը դիմել է, որպեսզի հանքը օգտագործի 20 տարի ժամկետով: Խոսքը բազալտի քարի հանքավայրի մասին է: Պայթեցում չի լինելու: Եթե անհրաժեշտություն լինի, ապա նոր տեխնոլոգիաներով անցք կծակվի, այնտեղ համապատասխան նյութ կլցվի ու առանց պայթեցնելու քարը կհանվի: Մենք պատրաստ ենք օգտակար լինել գյուղին :

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Հարգելի բնակիչներ, հանրային քննարկումները այսքանով չեն սահմանափակվում: Սա մեր առաջին քննարկումն է, եթե կան հարցեր՝ կարող եք հերթով բարձրաձայնել, որպեսզի շահագործող ընկերությունը պատասխանի հարցերին: Մենք՝ որպես համայնք պահանջատար ենք լինելու, որպեսզի պահպանվեն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով բոլոր նորմերը՝ այդ թվում բնապահպանական: Համայնքի համար շատ կարևոր է, որ շահագործումը իրականացվի առանց պայթեցումների, ինչպես նաև, որ գյուղում իրականացվեն սոցիալական աջակցության ծրագրեր: Դրանք կարող են տարբեր տեսքով լինել, օրինակ, եթե աշխատատեղեր լինեն, ապա ընդգրկվեն աշխատողներ գյուղից կամ այլ սոցիալական ծրագրեր՝ իհարկե հաշվի առնելով բնակիչների կարծիքը խնդիրների առաջնահերթության հետ կապված: Մենք ընկերությանը պահանջ ենք ներկայացրել, որպեսզի պահպանվեն բնապահպանական բոլոր նորմերը և շահագործումը լինի առանց պայթեցումների:

Խոսք (Արարատ Կարապետյան)- Մենք դա պատրաստ ենք կատարելու: Չենք պայթեցնելու, հորատելու ենք և տանենք Սյունիք աղացում իրականացնելու: Կարծում եմ գյուղացիների համար սա շատ ճիշտ աշխատանք է, նրանք ևս կօգտվեն, ինչպես Սյունիքը, որտեղ հիմա ճանապարհները բարեկարգվել են: Այսինքն մեր ընկերության հետ աշխատելը հաճելի է և օգտակար: Աճանանի առավելությունը նաև այն է, որ այստեղ կոմբինատն էլ է ներդրումներ անում, մենք էլ կանենք մեր հնարավորություններով: Այնպես կանենք, որ դժգոհ չլինեք:

Հարց (Գոռ Թադևոսյան)- Քանի՞ աշխատատեղ կբացվի:

Պատասխան (Արարատ Կարապետյան)- Մոտ 12 աշխատատեղ կբացվի: Եթե գյուղից ցանկացողներ լինեն, ապա կարող ենք վերցնել աշխատանքի: Եթե մեխանիզատոր կա, բարձրագույն ավարտ տղաներ կան, բանվորներ կան, մենք կարող ենք բոլորին օգտակար լինել:

Խոսք (Գոռ Թադևոսյան)- Հարգելի ներկաներ, քանի որ հանրային քննարկումը վերաբերվում է կոնկրետ բազալտի հանքավայրի շահագործմանը, եկեք հարցերը ուղղենք հանքի շահագործման հետ կապված խնդիրների վերաբերյալ: Իսկ քննարկումից հետո, եթե ունենաք այլ հարցեր ուղղված ինձ՝ որպես համայնքի ներկայացուցիչ կամ պարոն Կարապետյանին՝ որպես համայնքի գործարար մենք կմնանք և լսումից հետո կպատասխանենք բոլոր հարցերին: Իսկ հիմա թող հարցերը լինեն կոնկրետ հանքի հետ կապված:

Հարց (Մարտուն Արզումանյան- Աճանանի բնակիչ)- Այս հանքաքարի ժլայից նաև ներքևի ձորում էլ կա: Եթե սկսում եք կարելի է հենց ներքևից սկսել, գյուղի մոտ չլինի:

Պատասխան (Արարատ Կարապետյան)- Կոորդինատներով տրված է, որտեղ, որ կա այդտեղից պիտի սկսենք:

Պատասխան (Սերգեյ Առստամյան)- Երկրաբանական ֆոնդում բոլոր հանքերը գրանցված են, ինչպես նաև տարածքի հատակագիծը կոորդինատներով ամրագրված է: Գեոդեզիստը երբ գա, կետերը խփի, միգուցե պարզվի, որ հենց Ձեր ասածն էլ է այդ տարածքի մեջ:

Հարց (Հրաչ Կարապետյան- Աճանանի բնակիչ)- Այդ հանքը, որ սկսեք շահագործել, արդյո՞ք փոշին չի գալու գյուղ: Հանքում առանց պայթեցման չի լինում: Ես ինքս Քաջարանում եմ աշխատում: Առանց այդ էլ պոչամբարը այստեղ է, փոշին էլ մի կողմից գա, ինչ կլինի: Ես այս վերջին տարիներին նորմալ բերք չեմ հավաքում: Երբ Թեջադինում մեխանիզմը աշխատում է՝ գյուղում լսվում է: Հիմա, որ մեխանիզմը աշխատացնեք, արդյո՞ք ձայն չի գալու:

Լրացում(Գոռ Թադևոսյան)- Դեռ հանքը չի շահագործվում, որ բերք չեք ստանում:

Պատասխան (Արարատ Կարապետյան)- Այստեղ պայթեցում չի լինելու: Մեխանիզմները աշխատելու են օրը ցերեկով, միայն աշխատանքային ժամերին: Այստեղ մենք չենք աղում, որ փոշի լինի: Քարը հանելուց ինչու պիտի փոշի լինի: Սա բազալտի հանք է, բազալտը կտրվելու է, Սյունիքից ներքև աղվի:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Ձեր մտահոգությունը ընդունելի է, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը պետք է հասցվի նվազագույնի: Այս հանրային քննարկումները նրա համար են, որ մենք քննարկենք, թե ինչ խնդիրներ կան, ներառենք նախագծում՝ արդյունքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա հասցնելով զրոյի: Որտեղ խնդիր ենք տեսնում բնապահպանական, ընկերությունը կարող է համապատասխան միջոցառումներ իրականացնել, որոնք թե ի՞նչ տեսքով կլինեն դա կորոշեն նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության մասնագետները: Այնպես կարվի, որ հնարավորինս շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հասցվի նվազագույնի: Ինչպես հաստատեց ընկերության տնօրենը՝ հանքը առանց պայթեցումների է աշխատելու:

Հարց (Լյուդվիգ Գրիգորյան-ԱՃանանի բնակիչ)- Հանքի կոորդինատները կասե՞ք:

Պատասխան (Սերգեյ Առստամյան)- Կոորդինատները տրված են հայտում: Եթե ցանկություն ունեք կարող եմ հատակագիծը տրամադրել՝ ավելի մանրամասն ուսումնասիրելու համար:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Հարգելի մասնակիցներ, եթե բազալտի հանքավայրի հետ կապված այլ հարցեր չկան, ապա 1-ին հանրային քննարկումը համարենք ավարտված: Արձանագրությունում կֆիքսվի, որ առաջինը հանքը աշխատի առանց պայթեցումների, երկրորդը՝ բնակավայրում սոցիալական ծրագրեր իրականացվեն և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հասցվի նվազագույնի՝ այդ դեպքում նաև փոշու տեսքով: Իսկ ինչպես ներկայացրեցին ընկերության աշխատակիցները, աշխատանքները իրականանալու են 8 ժամյա ռեժիմով, ցերեկային ժամերին և չեն խանգարելու բնակիչներին: Այսքանով ավարտում ենք հանրային քննարկումը: Մեր և Ձեր կողմից բարձրացված հարցերը անպայման ֆիքսվելու են՝ ապագայում իրենց լուծումները գտնելու նպատակով: Շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

<u>Հանրային քննարկման պատասխանատու</u>
Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

<u>Ձեռնարկող՝</u>
«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն **Արարատ Կարապետյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>
Կապան համայնքի ղեկավարի տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>
Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**